

Հաստատված է՝

ԵՄԽՀ-ի գլխավոր խորհրդի

Գլխխորհրդի նախագահ՝

Ա.Ս.Աղաբաբյան

ԿԱՐԳ

ԲԱԿԱԼՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՄԱՆ

## 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը մշակված է ԿԳ նախարարի „ՀՀ բուհերի շրջանավարտների ամփափիչ ատեստավորման“, կարգի բուհի կանոնադրության և „կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման և ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման կարգ,-ի հիման վրա:
2. Ավարտական աշխատանքը հետազոտական բնույթի է և հաստատում է ուսանողի կողմից բակալավրի կրթական ծրագրի ելքային արդյունքներին համապատասխան մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:
3. Շրջանավարտի ավարտական աշխատանքի կատարման համար նշանակավոր է ղեկավար: Ավարտական աշխատանքները, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ ենթակա են գրախոսման:
4. Գրախոսումը կատարվում է արտադրության, գիտական հիմնարկների և համալսարանի փորձառու մասնագետների կողմից:
5. Գրախոսողների կազմը ամբիոնի վարիչի ներկայացմամբ հաստատվում է ամբիոնի նիստում և այդ մասին տեղյակ պահվում ուսանողներին:
6. Գրախոսման կարգը հաստատում է բակուլտետի խորհուրդը:

## 2. Գրախոսության ընթացակարգը

1. Ավարտած աշխատանքը ստորագրվում է ուսանողի կողմից և հաստատված ժամկետներում ներկայացվում է ղեկավարին՝ կարծիքի համար, ոչ ուշ, քան պաշտպանության համար հաստատված ժամկետից 20 օր:

2. Ղեկավարը ավարտական աշխատանքը ստանալուց մեկ շաբաթվա ընթացքում տրամադրում է իր ստորագրությամբ հաստատված գրավոր կարծիքը:

3. Կարծիքն ստանալուց հետո ուսանողը կազմում է աշխատանքը և պատրաստի կոշտ կազմով, տիտղոսաթերթի վրա անձնական ստորագրությամբ ու ղեկավարի ստորագրության առկայությամբ, ղեկավարի կարծիքի հետ միասին տալիս է գրախոսման:

4. Գրախոսման համար տրվում է ոչ ավել քան երկու շաբաթ: Գրախոսությունը ստանալուց հետո չի թույլատրվում աշխատանքի մեջ կատարել փոփոխություններ:

5. Ավարտական աշխատանքը գրախոսողը գնահատում է.

ա) թեմայի ընտրության հիմնավորվածությունը, տվյալ ընտրության գիտական փաստարկմանը,

բ) տվյալ թեմայի համապատասխանությունը մասնագիտությանը, ըստ որի շնորհվել է որակավորում,

գ) աշխատանքի մեջ հայրենական ու արտասահմանյան գիտնականների աշխատանքներում տվյալ թեմայով պարունակվող տեսական եզրակացությունների օգտագործման լրիվությունը, ուսումնասիրած նորմատիվ աղբյուրների որակը, հետազոտական առարկայի օրենսդրական բազայի վերլուծությունը,

դ) նպատակի ու խնդիրների համապատասխանությունը աշխատանքի բովանդակությանը, խնդիրների լուծման լրիվությունը, նյութի շարադրման տրամաբանությունը,

ե) խնդրի ուսումնասիրման և սեփական առաջարկների ձևակերպման համար ուսանողի կողմից ընտրված հետազոտվող սոցիալական օբյեկտների՝ կազմակերպությունների, հաստատությունների, գործունեության օրինաչափություններն ու մեխանիզմը բացահայտող դրույթները,

զ) խնդրահարույց իրավիճակի վերլուծության կոնկրետ մեթոդների կիրառման մակարդակը,

է) հեղինակի կողմից կատարված հետազոտությունների կոնկրետ արդյունքների և իրադրության գնահատման առկայությունը, առաջարկությունների ու եզրակացությունների հիմնավորվածությունը, նրանց համաձայնեցվածությունը առաջարկվող նպատակների և խնդիրների հետ,

ը) եզրակացությունների հիմնավորումը և փաստարկումը, ուսանողի դատողությունների ինքնուրույնությունը,

ժ) աշխատանքի ձևակերպման պահանջների ապահովումը,

թ) հեղինակի առաջարկած՝ իր կողմից մշակված առաջակությունների գնահատման եղանակները, տվյալ խնդրի հետազոտման հետագա հեռանկարների որոշումը:

6. Գրախոսականը պետք է պարունակի նաև առաջարկներ՝ նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ և պաշտպանությանը թույլատրելու / չթույլատրելու/ հիմնավորմամբ:

7. Գրախոսման արդյունքն է հանդիսանում գրախոսողի եզրակացությունը ավարտական աշխատանքի պաշտպանության հնարավորության մասին, և գնահատականը, որին գրախոսողի կարծիքով արժանի է տվյալ աշխատանքը:

8. Ավարտական աշխատանքը, սահմանված ժամկետներում կարծիքի և գրախոսության հետ միասին, ներկայացվում է ամբիոնի վարիչին՝ պաշտպանության իրավունքի մասին որոշում կայացնելու համար, այն կարող լինել դրական, նույնիսկ այն դեպքում, եթե գրախոսությունը բացասական է:

9. Պաշտպանությանը երաշխավորված աշխատանքի տիտղոսաթերթիկի վրա կատարվում է գրառում և այն հաստատվում ամբիոնի վարիչ ստորագրությամբ:

10. Պաշտպանության մերժման դեպքում հարցը քննարկվում է ամբիոնի նիստում, որը կայացնում է հիմնավորված որոշում: Մերժման պատճառները կարող են հանդիսանալ աշխատանքի անհամապատասխանությունը ստացող մասնագիտությանը, աշխատանքի կատարման ժամկետայնության խախտումը:

11. Գրախոսության և կարծիքների հետ ավարտված աշխատքնը փոխանցվում է ամբիոն պաշտպանությունից 2 կամ 3 օր առաջ:

### **3. Աշխատանքի գնահատման չափանիշները**

1. Գերազանց գնահատական նշանակվում է եթե.

ա) աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է ընտրած մասնագիտությանը և աշխատանքի թեմային,

բ) աշխատանքը այժմեական է, կատարված է ինքնուրույն, ունի ստեղծագործական բնույթ, աչքի է ընկնում որոշակի նորամուծությամբ,

գ) կատարված է խնդրի տեսական հետազոտման աստիճանի, նրա լուծման տարբեր մոտեցումների հանգամանակից վերլուծություն,

դ) ցուցաբերված է նորմատիվային բազայի իմացություն, հաշվի են առնված տվյալ խնդրի վերաբերյալ վերջին փոփոխությունները օրենսդրության մեջ և նոմատիվ փաստաթղթերում,

ե) խնդիրը վեր է հանված խորությամբ և բազմակողմանի, նյութը շարադրված է տրամաբանորեն,

զ) տեսական դրույթները սահուն գուգակցվում են կառավարչական փորձի հետ, տրված են հետաքրքրություն ներկայացնող գործնական հանձնարարականներ, որ բխում են խնդրի վերլուխությունից,

է) աշխատանքում լայնորեն կիրառվում են հեղինակի կողմից խմբի կազմում կամ ինքնուրույն անցկացրած հետազոտության նյութեր,

ը) աշխատանքում կատարված է խնդրի քանակական վերլուծության, որը հաստատում է տեսությունը և լուսաբանում է իրական վիճակը, բերված են համեմատության աղյուսակներ, գրաֆիկներ, դիագրամներ, բանաձևեր, որ ցույց են տալիս հեղինակի՝ հետազոտության արդյունքները ձևավորելու կարողութիւնը,

թ) լայնորեն ներկայացված է աշխատանքի թեմայով գրականությունը,

ժ) աշխատանքի հավելվածները լուսաբանում են հեղինակի ձեռքբերումները և հաստատում են նրա եզրակացությունները,

ի) իր բովանդակությամբ և ձևով աշխատանքը համապատասխանում է բոլոր ներկայացված պահանջներին:

2. Լավ գնահատական է դրվում է, եթե.

ա) թեման համապատասխանում է մասնագիտությանը,

բ) աշխատանքի բովանդակությունը ամբողջությամբ համապատասխանում է ավարտական առաջադրանքին,

գ) աշխատանքը այժմեական է, կատարված է ինքնուրույն,

դ) տրված է խնդրի տեսական հետազոտման աստիճանի վերլուծություն,

ե) աշխատանքի հիմնական դրույթները ներկայացված են տեսական և մեթոդաբանական բավարար մակարդակով,

զ) տեսական դրույթները սահուն զուգակցվում են կառավարչական փորձի հետ,

է) ներկայացված են խնդրահարույց իրավիճակը բնութագրող քանակական ցուցանիշներ,

թ) գործնական հանձնարարականները հիմնավորված են,

ժ) հավելվածները կազմված են գրագետ, երևում է կապը ավարտական աշխատանքի դրույթների հետ,

ի) աշխատանքի թեմայով կազմված է գրականության ցանկ:

3. Բավարար գնահատական դրվում է, եթե.

ա) աշխատանքը համապատասխանում է մասնագիտությանը,

բ) առկա է հայտարարված թեմային աշխատանքի բովանդակության որոշակի անհամապատասխանություններ,

գ) հետազոտվող խնդիրը հիմնականում բացահայտված է, սակայն աչքի չի ընկնում նորամուծությամբ, տեսական խորությամբ և փաստարկումներով,

դ) խորացված է նյութի շարադրման տրամաբանությունը, խնդիրները բացահայտված չեն ամբողջությամբ,

ե) աշխատանքում ամոռությամբ չեն օգտագործված թեմայի բացահայտման համար անհրաժեշտ գիտական գրականությունը, նորմատիվ փաստաթղթերը, ինչպես նաև հետազոտությունների նյութերը,

զ) տեսական դրույթները թույլ են կապված կառավարչական փորձի հետ, գործնական հանձնարարականները կրում են ձևական, ոչ ապացուցված բնույթ,

է) հավելվածությունների բովանդակությունը չի լուսաբանում դրված խնդիրների լուծումները:

4. Անբավարար գնահատական դրվում է, եթե.

ա) աշխատանքի թեման չի համապատասխանում մասնագիտությանը,

բ) աշխատանքի բովանդակությունը չի համապատասխանում թեմային,

դ) աշխատանքը պարունակում է էական տեսական-մեթոդաբանական սխալներ և հիմնական դրույթների մակերեսային պարազաբանում: